ամեն անգամ նախապես լվանում էին ձեռները։ Իրենց տները վերադառնալիս թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք տուն մտնելուց առաջ դարձյալ լվանում էին ձեռները։ Այսպիսով ոչնչացնում էին իրենց ունեցած առնչության ամեն հետքը ննջեցյալին մահ պատճառած չարիքի հետ, և տուն չէր բերվում այդ չարիքը։ Նույն նպատակով օխտը լրանալիս թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ, մոտիկ և հեռու ազգականները միասին գնում էին գերեզմանատուն և երկար լացուկոծից հետո քահանային օխտի կարգը կատարել էին տալիս և տուն վերադառնում։ Տղամարդիկ, որոնք այդ օխտն՝ յոթ օրվա ընթացքում ի նշան սգի չէին սափրվում, հացը ուտելուց հետո նույն օրը սափրվում էին։ Սափրիչը սկսում էր ննջեցյալի տան տղամարդկանցից, ապա անցնում էր ամենամոտիկ ազգականներին և այնուհետև մնացած բարեկամներին։ Բարեկամ կանայք էլ ճաշից հետո լվանում էին ննջեցյալի և նրա տանեցիների շորերը և ապա թե՛ տղամարդկանց և թե՛ իրենց գլուխները, որովհետև սգի համար նրանք էլ այդ օրերը գլուխները լվացած չէին լինում։ Այսպիսով մաքրված էին լինում բոլոր այն մարդիկ, որոնք այս կամ այն եղանակով իրենց վրա կարող էին պահած լինել ննջեցյալի հետ շփված լինելու մարմնական հետքերը։

Օխտին էապես վերջանում էին թաղման ծեսերի կարևոր մանրամասնությունները։ Գերեզման փորողներին տալիս էին յոթնական հաց, բաճի և թոխրայի երկաթները ուղիղ էին նստեցնում կոթին, դիակը լողացնելու համար ջուր բերած կուժը լվանում և սկսում էին գործածել։

Քառասունքին և տարելիցին գերեզմանն օրհնել էին տալիս քահանային։

Թաղման արարողությունների ժամանակ կրկին երևան էր գալիս հին ազգակցական կապերի պահպանման զորությունը։ Քանի որ մեռելը դեռ թաղված չէր և տանեցիք զբաղված էին թաղման հոգսերով, ազգականներն ու բարեկամներն էին նրանց համար ամեն կերակուր ուղարկում։ Նույնպես հին տոհմատիրական կարգերի վերապրումն էր, որ երբ ննջեցյալը դեռ թաղված չէր, նրա ազգականները, նույնիսկ ամբողջ գյուղը դադարեցնում էին դաշտային աշխատանքները[97]։ Այստեղ դրսևորվում էր տոհմի, համայնքի երբեմնի ներքին կապակցությունը։ Նույնը երևան էր գալիս և այն բանի մեջ, որ ուրիշ գյուղերում գտնվող բարեկամներն էլ յոթ օրվա ընթացքում շտապում էին այցելել սգավորների տունը և չմասնակցած լինելով անմիջապես հուղարկավորությանն՝ օրհնել էին տալիս ննջեցյալի գերեզմանը։ Ավելի հարուստ ընտանիքներն իրենց ազգականների ընկերակցությամբ այդ յոթ օրվա ընթացքում շարունակ անրիծք էին կատարել տալիս։ Տղամարդիկ, սգավորները և նրանց ազգականներն ու մոտիկ բարեկամները՝ թե՛ միևնույն գյուղում ապրողները, թե՛ հեռվից եկողները, գալիս էին եկեղեցի, քահանային համապատասխան աղոթքներ էին ասել տալիս և մի քանի մարդիկ մոտիկ բարեկամների հետ տանում էին նրանց իրենց տուն, կամ հրավիրում մոտիկ ազգականներից մեկի տունը և ընթրիքով հյուրասիրում։ Նույնպես տոհմական կարգերի վերապրումով պետք է բացատրել այն սովորությունը, որ թաղման հաջորդ օրն ազգական կանայք բերում էին սգվոր տունը ձու, պանիր, բրինձ, կերակուրներ և այլն, ապա տանեցի կանանց հետ գնալով առաջին այցելությանը գերեզմանին՝ այդ բերած մթերքներից պատրաստած հացն էին միասին ուտում։ Այնուհետև ամբողջ տարվա ընթացքում ազգականները նշանդրեք կամ հարսանիք անելիս գալիս էին այդ ընտանիքը սրգեան անելու՝ մի զույգ շմօշկ, բաակալ կամ մի

[97] СМОМПК, вып. XVII, отд. II, էջ 201։